

Առաջադրանք <<Ոսկերչություն >> հմտության համար

1. Առաջադրանքի նկարագիրը

Սույն առաջադրանքի նպատակն է, որ մասնակիցը կատարի յուրաքանչյուր առաջադրանքներից ամեն մեկը առանձին-առանձին:

Մոդուլ 1-ը և մոդուլ 2-ը պետք է պատրաստվեն առանձին առանձին, և 2րդ մոդուլի վերջում պետք է 2 դետալները հավաքվեն և դառնան մեկ հավաքական դետալ:

2. Նախագծի բնութագիրը

Օր 1

Առաջին օրվա սկզբում մասնակցին տրվում են բոլոր 2 մոդուլների համար համապատասխան մետաղը:

Օր 1-ի սկզբում մասնակիցը կարող է աշխատել 2 մոդուլների վրա:

Մոդուլ 1-ի սահմանված ժամանակի ավարտից հետո մասնակիցը պետք է հանձնի իր պատրաստած իրը / ավարտուն կամ ոչ ավարտուն տեսքով/ և իր մոտ եղած մնացած մետաղը:

Ժամանակ ունենալու դեպքում՝ մասնակիցը կարող է աշխատել հաջորդ մոդուլի վրա

Օր 2

Երկրորդ օրվա սկզբում մասնակցին տրվում է Օր 1-ից հետո հետ հանձնված մետաղը և մասնակցի պատրաստած / ավարտուն կամ ոչ ավարտուն/ դետալը:

Օր 2- ում մասնակիցը կարող է աշխատել բոլոր 2 մոդուլների վրա :

Մոդուլ 2-ի սահմանված ժամանակի ավարտից հետո մասնակիցը պետք է հանձնի իր պատրաստած իրը / ավարտուն կամ ոչ ավարտուն տեսքով/ և իր մոտ եղած մնացած մետաղը:

Ամեն օրվա վերջում մասնակիցների պատրաստած դետալները պետք է գնահատվեն: Վերջնական գնահատականը լինում է բոլոր օրերի գնահատականների հանրագումարը:

Բացատրություններ մասնակցի համար

Մասնակիցը պետք է օգտագործի միայն տրամադրված մետաղը:

Մասնակիցը ամեն օրվա վերջում պետք է հանձնի իր մոտի ամբողջ մետաղը:

Դետալները կամ գծագրերը նկարել չի թույլատրվում: